ՄԵԼԱՆԹՈՆ ԱՐՍԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱԼԻՆԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

# (2023-2028)

---



Տնօրենի հավակնորդ՝ ԳԱՐԻԿ ԲԱԲԿԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*ԹԱԼԻՆ 2023*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Ներածություն ____ **2**
2. Ուսումնական հաստատության նկարագիրը ____ **3-4**
3. Դպրոցի առաքելությունը____ **5-9**
4. 2018-2023 թթ-ի ընթացքում կատարված աշխատանքները ____ **10-13**
5. Հաստատության գործունեությունը ____ **13-15**

   Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ եվ թույլ տեղերը ____ **15-47**

6. Նպատակների և խնդիրների սահմանումը, սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, արդյունքների գնահատման չափանիշները, ռիսկերը, գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, վերահսկողության մեխանիզմները ____ **48-56**

7. Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները____ **57- 67**

8. Զարգացման ծրագրի գնահատման չափանիշները և վերահսկողությունը____**67-70**

9. Եզրափակում____ **71-72**

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Մելանթոն Արսլանյանի անվան Թալինի թիվ 1 հիմնական դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ դպրոց) զարգացման 2023-2028թթ. զարգացման ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. ռազմավարական ծրագիրը , <<ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի >> նախագիծը, Թալինի թիվ 1 հիմնական դպրոցի նախորդ տարիների գործունեությունը, մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները, համայնքի առանձնահատկությունները:

Դպրոցի  զարգացման ծրագիրը այն հիմնարար փաստաթուղթն է, որի վրա խարսխվում է դպրոցի առաջիկա հինգ տարիների կրթական և դաստիարակչական գործունեությունը: Ձևակերպում է այն ռազմավարությունը, ներառյալ այն նպատակներն ու խնդիրները, որոնք նախանշում են զարգացման հիմնական ուղիները և դրանց իրականացման հետ կապված բոլոր նախադրյալները:

2023-2028 թվականների զարգացման ծրագիրը մշակվել է համապարփակ վերլուծության արդյունքում, ինչպես նաև կրթության ոլորտում իրականացվող արմատական փոփոխությունների հիմնական ուղենիշների հիման վրա:

Ծրագրի հիմնախնդիրը դպրոցի զարգացման նոր ուղիներ փնտրելն է, որոնք նպատակաուղղված պետք է լինեն սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթության նախապատրաստմանը: Ինչպես նաև նպաստեն սովորողների արժեհամակարգի ձևավորմանը՝ ունենալով ավանդույթներով հարուստ բազմամյա պատմություն, առաջացնելով հետաքրքրություն նորի և հարգանք անցյալի նվաճումների նկատմամբ:

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հաստատության անվանում՝ Մելանթոն Արսլանյանի անվան Թալինի թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ

Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Թալին, Մ. Հարությունյանի փողոց, շենք 16

Շենքը՝ երեք մասնաշենք (I մասնաշենք 2050.9քմ, II մասնաշենք 829.86քմ, III մասնաշենք 228.11քմ ), կաթսայատուն 34.06քմ

Ընդհանուր տարածքը՝ 1.28 հա

Կառուցման տարեթիվը՝ 1964թ

Վերակառուցման տարեթիվը՝ 2003թ

Ջերմատուն՝(Ջերմոց) 300քմ

Մրգատու այգի՝ 6000քմ

Արևային ֆոտովոլտային կայան՝ 30.15 ԿՎտ

Պետական ռեգիստրում գրանցման համար՝ 94.210.00338, գր. Ամսաթիվ՝ 2003.01.17

ՀՎՀՀ՝ 05009997

Դպրոցը հիմնվել է 1964 թվականին, նախագծային հզորությունը 700 աշակերտ

ԼԻՑԵՆԶԻԱ՝

ՏԱՐՐԱԿԱՆ – Ա N 0883, ՀԻՄՆԱԿԱՆ - Ա N 0876

Սահմանային թիվ՝

Տարրական հանրակրթական-280, հիմնական հանրակրթական-350

Աշխատողների թիվը՝ 60 ( որից 32-ը ուսուցիչ)

Սովորողների թիվը 361

Որից ԿԱՊԿ ՈՒ աշակերտներ 8

# Աշխատողների ընդհանուր թիվը

| N | Աշխատողներ | Աշխատողների թիվը |
|---|---|---|
| 1 | Վարչական աշխատողներ | 3 |
| 2 | Ուսուցիչներ | 32 |
| 3 | ԴԱԿ | 1 |
| 4 | Օպերատոր | 1 |
| 5 | Ուսուցչի օգնական | 5 |
| 6 | Բազմամասնագիտ. աջակցող թիմ | 3 |
| 7 | Հաշվապահ | 1 |
| 8 | Գրադարանավար | 1 |
| 9 | Գործավար | 1 |
| 10 | Փականագործ | 1 |
| 11 | Հավաքարար | 3 |
| 12 | Պահակ | 3 |
| 13 | Այգեպան(ջերմոցի) | 1 |
| 14 | Ճաշարանի աշխատողներ | 4 |
| 15 | **Ընդամենը** | 60 |

# ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցը պետության հիմքն է: Դպրոցի առաքելությունը կոմպետենտ (կարողունակ) քաղաքացու ձևավորումն է. զինված գիտելիքներով, զարգացած կարողունակություններով, մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ նպատակասլաց և հայրենասեր:

Պետության և ազգի անվտանգության ապահովման և հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապազգայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմքում պետք է դրվի ազգային և արժանապատվություն ունեցող հայ մարդու դաստիարակությունը, ով ճանաչում, ընդունում և հարգանքով է վերաբերվում իր և ուրիշ ժողովուրդների ստեղծած հոգևոր և մշակութային արժեքներին: Հաստատության լիարժեք գործունեության համար պետք է նպաստել սովորողի մոտ մարդասիրական, ազգային, համամարդկային արժեքների ձևավորմանը: Սերմանել հայրենասիրություն, պատասխանատվություն, ուսուցողական միջավայրը դարձնել հետաքրքիր, գեղագիտական:

Ժամանակակից դպրոցից պահանջվում է.

1. Ձևավորել սովորողի շարունակական կրթությունն ապահովող անձնային որակներ:
2. Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ:
3. Առաջնահերթությունը տալ ուսուցման պրակտիկ ուղղվածությանը, որ սովորողը կարողանա ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառել:
4. Երաշխավորել սովորողների ազատությունը՝ որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոցի: Սովորողին ընձեռել ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորություն:
5. Ստեղծել պայմաններ ուսումնահետազոտական գործունեության համար:
6. Նպաստել սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը: Այս որակն իր մեջ ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբային աշխատանքի, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողություններ:

7. Սովորեցնել սիրել սեփական համայնքը, հոգ տանել սեփական միջավայրի մասին, առաջնային տեղում դնել հայրենիքը, համայնքը:
8. Սերմանել հայրենասիրություն, ազգային մտածողություն և ազգային գաղափարախոսություն:
9. Դպրոց՝ յուրաքանչյուր երեխայի համար, որտեղ կարող են սովորել բոլորը՝ այդ թվում ԿԱՊԿՈՒ երեխաները, սոցիալապես անապահով ընտանիքի երեխաները, կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխաները:
10. Սովորողների ստեղծագործական և ստեղծարար մտքի զարգացում՝ կրթության մեթոդների անհատականացման և արդիականացման միջոցով:
11. Դպրոցում ստեղծել մանկավարժների ստեղծագործական գործունեության համար պայմաններ, համագործակցության և փոխվստահության մթնոլորտ:
12. Ստեղծել այնպիսի գործողությունների համակարգ, որոնք կհամապատասխանեն համայնքի կարիքներին, արդի կրթության պահանջներին, կնպաստեն սովորողների մոտ բնապահպանական մտածողության ձևավորմանը:

## Ի՞նչ ռեսուրսներ են առկա առաքելության իրագործման համար

Նորագույն տեխնոլոգիաների կիրառում որոկյալ կրթություն ստանալու համար

- ✓ Սովորողի կրթական կարիքի բավարարում
- ✓ Սովորողի կրթական կարիքի գնահատում
- ✓ Համայնքի հետ ակտիվ համագործակցություն
- ✓ Կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել սովորական և ԿԱՊԿՈՒ երեխաները
- ✓ Համագործակցային աշխատանքային մթնոլորտ՝ դպրոց-ծնողական համայնք սերտ համագործակցությամբ
- ✓ Սովորողների ֆիզիկական և մտավոր զարգացման բավարար պայմաններ
- ✓ Սովորողների արժեհամակարգի ձևավորում:

## ա)Մարդկային ռեսուրսներ

- Առկա մասնագետների մասնագիտական համապատասխանություն
- Մանկավարժական համակազմի փորձառու կադրեր
- Հմուտ վարչական կազմ
- Հմուտ և հոգատար ուսումնաօժանդակ կազմ
- Նորարարություններով զարգացած աշակերտներ
- Իրենց գործին լավ տիրապետող բազմամասնագիտական թիմ
- Ծնողական համայնքի ակտիվ ներգրավվածություն

## բ)Աշակերտական համակազմ

**2022-2023 ուսումնական տարում դպրոցը համալրվել է 16 դասարանով:**

- Տարեսկզբին—355
- Տարեվերջին---353
- I-IV դասարաններում (7 դասարան)--147
- V-IX դասարաններում (9 դասարան)—206

**2023-2024 ուսումնական տարում դպրոցը նույնպես համալրվել է 16 դասարանով**

**Տարեսկիզբ-361 սովորող**

- I-IV դասարաններում (7 դասարան)—152
- V-IX դասարաններում (9 դասարան)—209

## Սովորողների շարժը

| Դաս. | 2020-2021 | | 2021-2022 | | 2022-2023 | |
|---|---|---|---|---|---|---|
| | Դաս. քանակ | Սովոր. թիվ | Դաս. քանակ | Սովոր. թիվ | Դաս. քանակ | Սովոր. թիվ |
| 1-ին | 2 | 37 | 1 | 34 | 2 | 41 |
| 2-րդ | 1 | 35 | 2 | 36 | 1 | 34 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **3-րդ** | 1 | 29 | 2 | 38 | 2 | 35 |
| **4-րդ** | 2 | 49 | 1 | 30 | 2 | 36 |
| **5-րդ** | 2 | 46 | 2 | 49 | 1 | 32 |
| **6-րդ** | 2 | 48 | 2 | 47 | 2 | 49 |
| **7-րդ** | 2 | 36 | 2 | 50 | 2 | 45 |
| **8-րդ** | 2 | 36 | 2 | 36 | 2 | 47 |
| **9-րդ** | 2 | 38 | 2 | 38 | 2 | 36 |
| **Ընդ.** | 16 | 354 | 16 | 358 | 16 | 355 |
| | | աճ | | աճ | | նվազում |

**2023-2024 ուստարի**

| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | Ընդ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **2** | **2** | **1** | **2** | **2** | **1** | **2** | **2** | **2** | **16** |
| 40 | 44 | 34 | 34 | 36 | 32 | 50 | 43 | 48 | 361 |
| | | | | | | | | | **աճ** |

**Դպրոցում սովորում են նաև 8 ԿԱՊԿՈՒ աշակերտներ.**

- Թեթև -- 3
- Միջին -- 4
- Ծանր -- 1

## գ)Նյութատեխնիկական բազա և ենթակառուցվածքներ

Ժամանակակից -- համակարգչային տեխնիկա

Ժամանակակից պահանջներին համապատասխան -- լաբորատոր սարքավորումներ

Առարկայական կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ

Սպորտային դահլիճ, հանդիսությունների դահլիճ

Բուժկետ և ճաշարան

## դ) Ֆինանսական ռեսուրսներ

- Դպրոցի ջերմոցի եկամուտներ
- Ֆոտովոլտային կայանի խնայողություններ
- Պետական բյուջե

**Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականներն են՝**

❖ Փորձառու մանկավարժական համակազմը

❖ Համագործակցային աշխատանքը

❖ Համընդհանուր ներառական կրթության իրականացումը

❖ Կրթության որակի բարելավմանը միտված միջոցառումներ, սեմինարներ, վերապատրաստումներ

❖ Կրթության կազմակերպման միջավայրի շարունակական բարելավումը

❖ Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում

❖ Արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ և այլն)

❖ Խրախուսման միջոցները

❖ Սովորողների մասնակցությունը օլիմպիադաներին:

Ուստի դպրոցի առաքելությունը պետք է բավարարի սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրագործման ուղիները:

# 2018-2023 ԹԹ-Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

| Ոլորտը | Իրականացված աշխատանքը |
|---|---|
| **Դպրոցի շենքային պայմաններ** | Կառուցվել է ճաշարան իր խոհանոցով և պահեստներով (**II մասնաշենք**)։<br>**I մասնաշենք**<br>Փոխվել է դպրոցի ամբողջ հատակը(միջանցքները սալիկապատվել, իսկ բոլոր դասարանները լամինատապատվել են) 2019թ։<br>Տեղադրվել է արևային ֆոտովոլտային կայան 30.15ԿՎտ։<br>Երկու անգամ կոսմետիկ վերանորոգվել է ամբողջ մասնաշենքը։<br>Կառուցվել է թեքահարթակ։<br>ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հարմարեցված սանհանգույց։<br>Փոխվել է ամբողջ ջրագիծը։<br>Կառուցվել է ջերմոց (300քմ)։ |
| **Նյութատեխնիկական բազա** | Ավելացվել է 5 նոր համակարգիչ, 4 պլանշետ, 1 հեռախոս, 2 բազմաֆունկցիոնալ տպիչ, առանձնասենյակի գույք( սեղան դիմաղիրով, 7աթոռ, 2 փոքր սեղան, խոհանոցային գույք)<br>Կրակմարիչներ 10 հատ, սպորտային գույք |
| **Մանկավարժական համակազմի ձեռքբերումներ** | Երեք կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ(72%, 73% և 95%), մեկ I տարակարգ ունեցող ուսուցիչ, երեք մենթոր ուսուցիչ և բոլոր ուսուցիչները մասնակցում են |

| | |
|---|---|
| | հերթական վերապատրաստումներին:<br>Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն կրթություն և համապատասխան որակավորում: |
| **Ժողովրդական սկզբունքների կարևորում** | Դպրոցում ակտիվորեն գործում են աշակերտական և ծնողական խորհուրդները, որոնք սերտորեն համագործակցում են տնօրենության և մանկավարժական համակազմի հետ:<br>Աշակերտական խորհուրդն անցկացնում է միջոցառումներ, աշակերտական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: |

## Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝

<<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<ՀՀ աշխատանքային օրենսգրքով>>, ՀՀ օրենքներով, հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով և օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով: Դպրոցում ներքին գործածության համար նախատեսված նոր ակտեր են մշակվում (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ և այլն): Փաստաթղթերի թղթային ձևաչափից դպրոցը աստիճանաբար անցում է կատարում էլեկտրոնայինի: ԿՏԱԿ-ի շնորհիվ հաստատությունում ապահովվում է ՏՀՏ ներդրումը, հանրակրթական դպրոցների միջև համընդհանուր համակարգչային ցանցը՝ նպաստելով ուսուցիչների համակարգչային գրագիտության

բարձրացմանը: Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողություն անցկացնելու, հետևողականորեն վերլուծություններ կատարելու համար: Դպրոցին վերաբերվող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով:

## Ֆինանսատնտեսական գործունեությունը

Ֆինանսավորումը դպրոցի կատարվում է պետբյուջեից՝ կախված սովորողների թվից, որը բավարարում է դպրոցին անհրաժեշտ բոլոր ծախսերը:

2023թ սեպտեմբերից համաձայն փոփոխությունների ֆինանսավորվելու է ըստ դասարանների թվի: Յուրաքանչյուր տարվա նախահաշիվը կազմվել է սահմանված կարգով: Հաստիքացուցակը, նախահաշիվը և եռամսյա հաշվետվությունները լիազոր մարմնի կողմից հաստատվելուց հետո տեղադրվում է դպրոցի պաշտոնական կայքում /talin1.schoolsite.am/:

Ուսուցչի դրույքաչափերը 2018թ սեպտեմբերի դրությամբ եղել է

0-1 տարի – 101000դրամ

1-15 տարի- 105000դրամ

15տ. և ավել- 108000դրամ

2019թ սեպտեմբերից մինչ 2023թ-ի սեպտեմբեր՝ 0-1 տարի- 110000դրամ, 1-15 տարի- 115500դրամ, 15տ. և ավել- 118800դրամ:

2023թ սեպտեմբերի դրությամբ դպրոցում ուսուցչի դրույքաչափերն են՝

0-1 տարի – 119808դրամ

1-15 տարի- 120000դրամ

15տ. և ավել- 120200դրամ

Դպրոցի ֆինանսական վիճակը 2019-2023թթ, 2019թ- **72773.9** , 2020թ-**71985.8**, 2021թ-**78522.2**, 2022թ-**78177.3**, 2023թ-**77507.2** հազար դրամ 8 ամսվա համար: Դպրոցը նոր ֆինանսական տարին միշտ ազդարարել է առանց պարտքերի:

Հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը եղել է հստակ և թափանցիկ: Դպրոցի հաշվապահը պատասխանատու ձևով վարել է հաշվապահական հաշվառումը, ժամանակին կազմել ֆինանսական հաշվետվությունները և ներկայացրել մարզպետարան: Նախատեսվում է 2023-2024 ուստարում ստեղծել արտաբյուջե՝ դպրոցի ջերմոցի եկամուտների համար, որը հետագայում կծառայի դպրոցի կարիքների համար:

Դպրոցում յուրաքանչյուր տարի կատարվել է գույքագրում, որտեղ ամբողջ գույքը հաշվառված է (առկա, ձեռք բերված):

# ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի, քաղաք Թալինի Մ. Հարությունյան 16 հասցեում:

Ըստ կրթական մակարդակների դպրոցն իրականացնում է 1-ին(1-4-րդ դասարաններ) և 2-րդ(5-9-րդ դասարաններ) աստիճանի հանրակրթական ծրագրեր:

Դպրոցում աշխատում է 32 ուսուցիչ

Սովորողների թիվը՝ 361

Դպրոցում գործում են խորհրդակցական և կառավարման մարմիններ, որոնք գործում են իրենց իրավասության սահմաններում:

2017թ-ից դպրոցն իրականացնում է նաև ներառական կրթություն:

Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով: Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, անձի ազատ զարգացման, ազգային և համամարդկային արժեքների զարգացման սկզբունքի վրա:

ա) **Ինչ կրթական կարիքներ է բավարարելու դպրոցի առաքելությունը**

Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել

- համակողմանիորեն զարգացած և կարողունակ
- մասնագիտորեն կողմնորոշված
- ազգային արժեքներ կրող
- հայրենասեր

- գլոբալիզացիայի մարտահրավերներին պատրաստ
- համաշխարհային աշխատաշուկայում կողմնորոշվող և մրցունակ
- մարդասիրության ոգով դաստիարակված, կոմպետենտ
- համաշխարհային մշակույթին ծանոթ, հայրենասեր

  քաղաքացիներ:

Այսպիսով, դպրոցի առաքելությունը պետք է բավարարի սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրագործման ուղիները:

բ) Ծրագիրը մշակելիս առաջնորդվել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ N 35-Ն հրամանի համապատասխան՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներով և ձևաչափով: Ծրագրի իրականացման համար մեծ ազդեցություն ունեն արտաքին և ներքին գործոնները: Արտաքին գործոնների թվին են պատկանում պետության կրթական քաղաքականության առանձնահատկությունները, սովորողների կրթական կարիքները, համայնքի առանձնահատկությունները և այլն: Ներքին գործոններից է մանկավարժական աշխատակազմի փորձը, դպրոցի առկա ռեսուրսները:

Ապահովել սովորողների կրթական կարիքներին, հակումներին, ընդունակություններին, կարողունակություններին և նախասիրություններին համապատասխան կրթություն ստանալու հնարավորություն:

Ապահովել պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխանող ուսումնառություն:

գ) **Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին**

Առկա հնարավորություններով, շենքային պայմաններով, ենթակառուցվածքներով (մարզադահլիճ, գրադարան, ճաշարան, հանդիսությունների դահլիճ, մարզադաշտ, բուժկետ, ջերմոց, արևային կայան), մարդկային ռեսուրսներ (որակյալ ուսուցչական կազմ, բազմամասնագիտական թիմ (սոց մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ) ուսուցչի օգնականներ և

իրենց գործին հմուտ ուսումնաօժանդակ անձնակազմ), համապատասխանում է ՀՀ կրթական պահանջներին:








# ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ՏԵՂԵՐԸ

## ա)Նկարագրված են հաստատության շենքային պայմանների առկա վիճակը

Մելանթոն Արսլանյանի անվան Թալինի թիվ 1 հիմնական դպրոցի շենքը գտնվում է բարեկարգ վիճակում: Դպրոցն ունի երեք մասնաշենք՝ I մասնաշենք 2050,9քմ(երկհարկանի), II մասնաշենք 829,86 քմ(երկհարկանի), III մասնաշենք 228,11 քմ (մարզադահլիճ): Շահագործման է հանձնվել 1964թ-ին, նախագծային հզորությունը 700 աշակերտի համար է:

**I մասնաշենքը** հիմնանորոգվել է 2003թ-ին, իսկ 2019թ-ին վերանորոգվել ամբողջ մասնաշենքը(դասարանների և միջանցքների հատակը հիմնովին փոխվել և բոլոր աշակերտական նստարան-սեղանները թարմացվել են, ներկվել բոլոր պատերը): Դասերը

իրականացվում են միայն I մասնաշենքում, որտեղ գործում է 20 դասասենյակ(որոնցից 9-ը առաջին հարկում, 11-ը երկրորդ), 4 առանձնասենյակ, 2 համակարգչային սենյակ(որոնցից մեկը առաջին հարկում է մյուսը՝ երկրորդ ), շախմատի սենյակ , հանգստի սենյակ, բազմամասնագիտական թիմի սենյակ, բուժկետ, ուսուցչանոց, լաբարատորիա(ֆիզիկա), 2 փոքր պահեստային սենյակներ, զենքի պահեստ, 5 սանհանգույց (որոնցից 1-ը ԿԱՊԿՈՒ սովորողների համար):

**Առաջին հարկ**- համակարգչային սենյակ 55քմ, մեկ դասասենյակ 70քմ, 4 դասասենյակ 46քմ, 4 դասասենյակ 36քմ, 2 առանձնասենյակ 17քմ, ուսուցչանոց 30քմ, բուժկետ 12քմ, հանգստի սենյակ 17քմ, մեկ պահեստային սենյակ 6քմ, երկու ուսուցչական սանհանգույց՝ յուրոքանչյուրը 4քմ, երկու աշակերտական սանհանգույց՝ յուրաքանչյուրը 17.8քմ և մեկ հարմարեցված սանհանգույց 4քմ:

**Երկրորդ հարկ**- համակարգչային սենյակ 51քմ, շախմատի սենյակ 70քմ, երկու առանձնասենյակ 12քմ և 10քմ, բազմամասնագիտական թիմի սենյակ 18քմ, լաբորատորիա 16քմ, զենքի պահեստ 6.6քմ, մեկ պահեստային սենյակ 8քմ, ութ դասասենյակ 51քմ, երեք դասասենյակ 36քմ:

Տանիքը նորմալ է, որտեղ տեղադրված է արևային ֆոտովոլտային կայան (30.15ԿՎտ), պատուհանները եվրոպական, միջանցքների հատակը սալիկապատ է, իսկ դասարանները լամինատապատ, ունի նաև 4 վթարային ելքեր ինչպես նաև թեքահարթակ:

Դպրոցի շենքի **կարիքներն են**՝ առարկայական սենյակները(ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության) և լաբորատորիաները(ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության), երկրորդ հարկում 2 սանհանգույցի, առաջին հարկում ռեսուրս սենյակի: Շենքային պայմանները ունեն հնարավորություն ստեղծելու այս ամենը, որի հիման վրա կարելի է դպրոցում իրականացնել լիարժեք հանրակրթության չափորոշչային պահանջներին համապատասխան ուսուցում: I մասնաշենքը վերանորոգման կարիք չունի:

Բոլոր դասասենյակները մեծ են և լուսավոր՝ սովորողների քանակի հետ կապված: Դպրոցում կա երկու դասարան 32 և 34 սովորողների թվով՝ որոնք տեղակայված են 70քմ մակերեսով դասասենյակներում, որը ամբողջովին բավարարում է պահանջվող չափերին: Դպրոցի դասասենյակները ամբողջովին բավարարում են նաև կիսվող դասարանների համար:

**II մասնաշենքում** 829.86քմ(երկհարկանի) գործում է գրադարան, ճաշարան և խոհանոց, հանդիսությունների դահլիճ, ունի նաև 2 սանհանգույց, որոնք գտնվում են ոչ բարվոք վիճակում, առկա է նաև 11 սենյակներ, որոնց մի մասը օգտագործվում է որպես պահեստային սենյակներ: Միջանցքների հատակը սալիկապատ է, իսկ սենյակներինը մանրահատակ է: Տանիքը նորմալ է, պատուհանները եվրոպական:

**Առաջին հարկ**- ճաշարան 62քմ, խոհանոց 30քմ, սննդի պահեստ 19քմ, երեք սենյակներ 31քմ, մեկ սենյակ 43 քմ և մեկ 18 քմ, երկու սանհանգույց՝ յուրաքանչյուրը 23քմ, բոլոր սենյակները պահեստային են:

**Երկրորդ հարկ**- գրադարան 65քմ, հանդիսությունների դահլիճ 113քմ, պահեստային սենյակներ՝ 19քմ, 30քմ, 27քմ, 36քմ, 33քմ և 28քմ:

Մասնաշենքը ունի **կարիք**՝ ավելացնել գրադարանը մեկ սենյակով, մեկ սենյակ նախատեսված է ընթերցասրահի համար, իսկ առաջին հարկում նախատեսել մեկ սենյակ՝ որպես արհեստանոց: Շենքը հիմնականում վերանորոգման կարիք չունի, միայն երկու սանհանգույցներն ունեն վերանորոգման կարիք: Ունի մեկ վթարային ելք:

**III մասնաշենքում /228,11քմ/** է գտնվում սպորտդահլիճը՝ 154քմ, 2 հանդերձարաններով յուրաքանչյուրը 18քմ, 2 սանհանգույցներով յուրաքանչյուրը 5քմ, փոքր խաղասենյակով 36քմ և մարզիչի սենյակով 9,9քմ: Տանիքը և հատակը հիմնանորոգված է, պատուհանները եվրոպական: Ունի նաև մեկ վթարային ելք: Մասնաշենքը ամեն ինչով շատ հարմարավետ է, ոչ մի փոփոխության կարիք չունի, վերանորոգման կարիք նույնպես չունի:

**II և III մասնաշենքերը** վերանորոգվել են 2009թ-ին:

**Ջեռուցումը** գազ/լոկալ, ջեռուցվում է միայն I և III մասնաշենքերը: Դպրոցի տարածքը պարսպապատ է, ջրամատակարարումը՝ շուրջօրյա:

**Կաթսայատուն** (34.06քմ) կառուցվել է 2009թ-ին:

Դպրոցի բակում կա **հուշարձան**՝ նվիրված հայրենական մեծ պատերազմում զոհված ուսուցիչներին:








## Դպրոցի շենքային պայմաններ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| • Հիմնանորոգված գլխավոր **մասնաշենք** I (2050.9քմ), եվրոպական պատուհաններ, սանհանգույցներ, միջանցքներ)<br>• Հարմարեցված սանհանգույց<br>• Թեքահարթակ | • Նկուղի, ապաստարանի բացակայություն<br>• Ընթերցասրահի բացակայություն<br>• Առարկայական դասասենյակների |

| | |
|---|---|
| • Ջեռուցման համակարգ/լոկալ/<br>• Խմելու ջուր շուրջօրյա<br>• Արևային ֆոտովոլտային կայան<br>• Ընդարձակ և լուսավոր դասասենյակներ<br>• Ընդարձակ և կանաչապատ բակ<br>• Վթարային ելքեր<br>• Գրադարան(II)65քմ,<br>• Համակարգչային սենյակներ, ճաշարան(II)62քմ<br>• Մարզադահլիճ(III) 154քմ հանդերձարաններով, վթարային ելքով, 2 սանհանգույցներով<br>• Ֆուտբոլի դաշտ, խաղահրապարակ<br>• Բուժկետ<br>• Հանգստի սենյակ<br>• Պարսպապատ է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար<br>• Կաթսայատան /34.06քմ/ առկայություն<br>• Հանդիսությունների դահլիճ 113քմ | բացակայություն<br>• Արհեստանոցի բացակայություն<br>• Ճաշարանը **II մասնաշենքում** է (չի ջեռուցվում)<br>• **II մասնաշենքի** անմխիթար սանհանգույցներ<br>• Ոռոգման ցանցի բացակայություն<br>• Դպրոցի I **մասնաշենքի** հետնամասում ոչ բարվոք վիճակ<br>• Լաբորատորիաների բացակայություն<br>• Ռեսուրս- սենյակի բացակայություն (ԿԱՊԿՈՒ սովորողների համար)<br>• Պահակակետի բացակայություն<br>• Մեկուսարանի բացակայություն |

| **Շինությունների և հարմարությունների անվանումը** | **Քանակը** | **Մակերեսը քմ** |
|---|---|---|
| Շենքեր | 4 | 3142 |

| **Շինությունների և հարմարությունների անվանումը** | **Քանակը** | **Մակերեսը քմ** |
|---|---|---|
| Ջեռուցման | Գազ/լոկ | 2280 |

| | | |
|---|---|---|
| | | |
| Առանձնասենյակներ | 4 | 56 |
| Դասարաններ | 20 | 700 |
| Լաբորատորիա | 1 | 16 |
| Մարզադահլիճ | 1 | 154 |
| Գրադարան | 1 | 65 |
| Բուժկետ | 1 | 12 |
| Ճաշարան | 1 | 62 |
| Հանդերձարաններ | 2 | 18 |
| Զուգարաններ | 9 | 190 |
| Տեխ. նշանակության այլ սենյակներ | 2 | 110 |
| Մարզահրապարակ | 1 | 1640 |
| Համակարգիչներ | 28 | |
| Համակարգչային այլ տեխնիկա | 1 | |
| Ջեռուցվող տարածքներ | 2 | 2280 |
| Հեռախոսներ | 1 | |
| Հանդիսութ. դահլիճ | 1 | 113 |

| | | |
|---|---|---|
| տեսակը | .կաթսա | |
| Ջեռուցման օրերը | | |
| Տրանսպորտային միջոցներ | | |
| Լոգապատ սովորողներ | | |
| Երթևեկող սովորողներ | | |
| Գիշերող սովորողներ | | |
| Մրգատու այգիներ | Խնձոր,ս ալոր | 6000 |
| Դեկորատիվ, բուսական այգիներ | Եղնինհե ր | |
| Շենքի ներսի մաքրվող մակերես | 3 | 3142 |
| Սան հանգույցի մաքրվող մակերես | 9 | 190 |
| Ջերմոց | 1 | 300 |
| Շախմատի սենյակ | 1 | 70 |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

## գ) Նյութատեխնիկական բազան և այլ ռեսուրսները՝ հաշվետու ժամանակաշրջանում

Հաստատությունում 2013թ-ին դպրոցի շրջանավարտ բարերարի կողմից ստեղծվել է նորաոճ համակարգչային սենյակ՝ իր ամբողջ գույքով՝ 15 Dou al core համակարգիչներով և էլեկտրոնային էկրանով(երկրորդ հարկ):

2023-2025թթ նախատեսվում է թարմացնել 2-րդ համակարգչային սենյակը (որտեղ կա 8 Pentium 4 հին համակարգիչներ) նոր ժամանակակից համակարգիչներով, էլեկտրոնային գրատախտակով և պրոյեկտրով(առաջին հարկ): Առկա է նաև 3 բազմաֆունկցիոնալ տպիչ և մեկ պրոյեկտոր: Հաստատությունում կա 28 համակարգիչ, որոնցից 15-ը 1-ին համակարգչային սենյակում է, 8-ը՝ 2-րդ, իսկ 5-ը առանձնասենյակներում: Ֆիզիկայի թերի համալրված լաբորատորիա(ինքնաշեն):

2023-2025թթ նախատեսվում է ֆիզիկայի լաբորատորիան համալրել գերժամանակակից գույքով և ստեղծել քիմիայի, կենսաբանության ժամանակակից լաբորատորիա՝ համապատասխան գույքով: Նախատեսվում է նաև ստեղծել աշխարհագրության դասասենյակ բոլոր հարմարություններով (գլոբուս, քարտեզներ և այլն):

Ժամանակակից աշխարհում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արագ զարգացման հետ կապված 2023-2028թթ ստեղծել լաբորատորիաները և ապահովել համապատասխան տեխնիկայով՝ վիրտուալ փորձերի տեսական և ինտերակտիվ մասը զուգակցելու և արդյունավետ համակցված դասեր կազմակերպելու նպատակով:

Դպրոցում կա նաև ԿԱՊԿՈՒ սովորողների սենյակ, բայց դպրոցն ունի նաև ռեսուրս-սենյակի պահանջ: Գրադարանը հագեցած է 7500(գեղարվեստական և մեթոդական) գրքերով և դասագրքերով ապահովված է:

Դպրոցում ամբողջ աշակերտական սեղան նստարանները թարմացված են: 2019թ-ին ԿԳՄՍ նախարարության կողմից դպրոցին տրվեց 6 անուն սպորտային գույք, սակայն դպրոցն ունի սպորտային գույքի պակաս: Դպրոցը Covid-19-ի ժամանակ Մարզպետարանից ստացել է 4 պլանշետ և 1 հեռախոս: Առկա է նաև խոհանոցային նոր գույք: 2021թ ՄԱԿ-ի Պարենի

Համաշխարհային Ծրագրի շրջանակներում դպրոցի շենքի վրա տեղադրվել է 30.15 ԿՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան: Դպրոցը մեծ **կարիք** ունի լաբորատորիաների(ֆիզիկա, քիմիա, կենսաբանության) սարքավորումների և գերժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, որոնք կապահովեն կրթության որակը՝ հանրակրթության պետական չափորոշչային պահանջներին համապատասխան: **Կարիք** ունի նաև ընթերցասրահի գույքի(սեղան նստարան) և արհեստանոցի գույքի(սեղաններ, սարքավորումներ):

## Դպրոցի նյութատեխնիկական բազա

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Էլեկտրոնային տեխնիկայի առկայություն (28 համակարգիչ, 4 պլանշետ, 3 բազմաֆունկցիոնալ տպիչ, 1 պրոյեկտոր, 1 էլեկտրոնային էկրան),1 հեռախոս<br>• Ուսուցչական և աշակերտական գույք(սեղան-նստարան, աթոռ, գրատախտակ, պահարան)<br>• Խոհանոցի համապատասխան գույք(սառնարան, ջեռոց, ջրատաքացուցիչ, էլ. Սալօջախ, խմորհարիչ և այլն )<br>• Ուսումնական զենքեր(ինքնաձիգ, ականանետ) | • Էլեկտրոնային գրատախտակների բացակայություն (2 հատ)<br>• Համակարգիչներ հին՝ Pentium 4 (8 հատ)<br>• Պրոյեկտորների կարիք (2 հատ)<br>• Ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաների սարքավորումների բացակայություն<br>• Ճաշարանի նոր գույքի բացակայություն (սեղան նստարան)<br>• Ընթերցասրահի գույքի բացակայություն(սեղան |

| | |
|---|---|
| | նստարան)<br>• Ռազմագիտության ժամանակակից գույքի և հրաձգարանի գույքի բացակայություն<br>Օդամղիչ հրացանի բացակայություն<br>• Աշխարհագրության գույքի բացակայություն<br>• Սպորտային գույքի պակաս<br>• Արհեստանոցի գույքի բացակայություն: |

## Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Դպրոցի կառավարումն իրականացվում է՝համաձայն կանոնադրության:

Հաստատության կառավարման և խորհրդակցության մարմիններում պարբերաբար քննարկվում են հանրակրթության ոլորտին վերաբերող օրենսդրական առաջարկներն ու նախագծերը. առաջարկության դեպքում ներկայացվում են առաջարկներ և դիտարկումներ դրանց վերաբերյալ ոլորտի կառավարման համապատասխան մարմիններին:

**Հաստատության կառավարման մարմիններն են՝**

- Հիմնադիրը
- Արագածոտնի մարզպետարանը /լիազորված մարմին/
- Կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը
- Գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը

Դպրոցը սերտորեն համագործակցում է կառավարման մարմինների հետ: Խորհրդի գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը: Խորհուրդը աջակցում է դպրոցի առաջընթացին և բոլոր նախաձեռնություններին:

**Կառավարման խորհուրդը** կազմված է 9 անձից: Նիստերը գումարվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ: **Խորհուրդը հաստատել է** – դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, ԿԱՊԿՈՒ աշակերտների ցուցակը, ուսուցչի թափուր տեղի մրցույթի անցկացման կարգը:

**Խորհուրդը հավանություն է տվել** – հաստիքացուցակին, տարիֆիկացիոն ցուցակին, նախահաշվին, հաջորդ տարվա բյուջեի նախագծին:

**Խորհուրդը իրականացրել է** – վերահսկողություն տնօրենի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ:

**Դպրոցի տնօրենը** – խորհրդի քննարկմանն է ներկայացրել ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները, ներքին գնահատման արդյունքները, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և ֆինանսավորման հայտը: **Կազմել է** տարիֆիկացիան, հաստիքացուցակը, նախահաշիվը: **Աջակցել է** բոլոր խորհրդակցական մարմինների աշխատանքներին, մանկավարժական խորհրդի ներկայացմամբ **հաստատել է՝** ուսպլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, փոխտնօրենների, մեթոդական միավորումների նախագահների, դասղեկների և մանկավարժների հաշվետվությունները: Տնօրենը խորհրդակցական ձայնի իրավունքով **մասնակցել է** խորհրդի նիստերին, մշակել և խորհրդի հավանությանն է ներկայացրել՝ դպրոցի ներքին կարգապահական կանոնները, ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգը:

**Ապահովել է** դպրոցում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը, կրթական ծրագրերի իրականացումը, լիազորված մարմնի ՀՀ օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը, բյուջետային հատկացումների և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը: Սահմանված կարգով ձևավորել է սովորողների համակազմը, ապահովել նրանց սոցիալական պաշտպանվածությունը: Սերտորեն համագործակցում է կառավարման և խորհրդակցական մարմինների հետ:

## Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| ➢ Տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով<br>➢ Խորհրդի հավանությանն է ներկայացնում տարիֆիկացիան, ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգը<br>➢ Տնօրենը խորհրդի հաստատմանն է ներկայացնում ներքին կարգապահական կանոնները, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, սովորողների և աշխատողների վարքագծի կանոնները<br>➢ Խորհրդին է ներկայացնում դպրոցի զարգացման ծրագրի իրականացումն ապահովող գործողությունների ժամանակացույցը<br>➢ Խորհրդի քննարկմանն է ներկայացրել ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության | Խորհրդի կողմից նախաձեռնության պասիվություն<br>Համագործակցության, պակաս<br>Խորհրդի անդամների աշխատանքային զբաղվածության հետ կապված, նիստերից դուրս դպրոցական կյանքին թույլ մասնակցություն |

| | |
|---|---|
| հաշվետվությունները, ներքին գնահատման արդյունքները | |

## Հաստատության խորհրդակցական մարմիններն են

- Մանկավարժական խորհուրդ
- Ծնողական խորհուրդ
- Աշակերտական խորհուրդ
- Առարկայական մեթոդմիավորումներ

Դպրոցի **մանկավարժական խորհուրդը** կազմված է 44 մանկավարժական աշխատողներից: Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են նաև արտահերթ նիստեր:

**Մանկավարժական խորհուրդը քննարկել է՝**

ա) Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը

բ) ԿԱՊԿՈՒ սովորողների անհատական ուսուցման պլանը

գ) Սովորողների ուսումնառության որակի, բովանդակության, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպումը

դ) Հաստատել դպրոցի աշխատանքային շաբաթվա տևողությունը և աշխատանքային ռեժիմը

ե) Ծնողների համաձայնության դեպքում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը:

Դպրոցի **ծնողական խորհուրդը** կազմված է 16 անձից:

Ծնողական խորհուրդը կազմավորվել է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է: Դպրոցի խորհրդի ձևավորման պահանջներին համապատասխան ծնողական խորհուրդը իր կազմից առաջադրել է խորհրդի անդամության թեկնածուների:

**Ծնողական խորհուրդը համագործակցում է** տնօրինության, մանկավարժական խորհրդի և աշակերտական խորհրդի հետ: Դպրոցում գործում են նաև դասարանների ծնողական խորհուրդները, որոնք կազմված են նախագահից և երկուսից չորս անդամից: Ծնողական խորհուրդը մշտապես աջակցում է սոցիալապես անապահով երեխաներին, արտադպրոցական աշխատանքներին, կազմակերպում էքսկուրսիաներ և այլն:

Դպրոցի **աշակերտական խորհուրդը** կազմված է 18 սովորողից: Աշակերտական խորհուրդը ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան գործում է շատ ակտիվ ինքնակառավարման լիազորություններով, մշտապես մասնակցում է դպրոցի կյանքին (հանրօգուտ աշխատանքներ, միջոցառումներ), խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին, անում առաջարկներ: Աշակերտական խորհուրդը կազմակերպում է մշակութային և մարզական միջոցառումներ, կազմակերպում է հանրօգուտ աշխատանքներ՝ ծառատունկ և շաբաթօրյակներ:

**Մեթոդմիավորումներ**

Դպրոցում գործում են 5 առարկայական մեթոդմիավորումներ:

- ✓ Տարրական
- ✓ Պատմաբանասիրական
- ✓ Մաթեմ., ինֆորմատիկա
- ✓ Օտար լեզուներ
- ✓ Բնագիտական

Մեթոդմիավորումը քննարկում է հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան ուսումնական և թեմատիկ պլանների նախագծերը, քննարկում է ԿԱՊԿ ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանները(ԱՈՒՊ): Նպաստում ուսուցիչների որակավորման բարձրացմանը, ուսուցիչներին խրախուսում և նախապատրաստում ատեստավորման: Մեթոդական միավորումը կատարում է ուսումնական պլանով սահմանված

դասաժամերի նախնական բաշխում և ներկայացնում տնօրենին, կազմակերպում է սեմինարներ խորհրդատվություններ, մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի, դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման մասին առաջարկություններ:

Դպրոցում աշխատող բոլոր 32 ուսուցիչներն ընդգրկված են 5 առարկայական մեթոդական մասնախմբերում: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածության գործակիցը 15 ժամ է: Մեկ ուսուցչին բաժին է ընկնում 12 աշակերտ: Դպրոցն անցած ուսումնական տարում ապահովել է 100% առաջադիմություն: Ունի 71 գերազանցիկ և 131 հարվածայիններ: Սովորողների 70%-ը ընդգրկված են արտադպրոցական խմբակներում:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Դպրոցը սերտորեն համագործակցում է կառավարման և խորհրդակցական մարմինների հետ:<br>Կառավարման խորհրդի անդամների վերապատրաստման ակտիվ մասնակցություն:<br>Պարտաճանաչ իր լիազորությունները կատարող կառավարման խորհուրդ:<br>Դպրոցն ունի 5 մեթոդմիավորումներ, որոնք ժամանակին գումարում են իրենց նիստերը և կազմակերպում են ուսումնադաստիարակչական աշխատանքներ:<br>Կառավարման խորհրդի կողմից պատշաճ վերահսկողություն:<br>Կառավարման մարմինների աշխատանքային կարգապահություն: | Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ:<br>Ծնողխորհրդի թույլ համագործակցությունը տնօրենության հետ:<br>Ծնողխորհրդի պասիվությունը ԿԱՊԿՈՒ աշակերտների ինտեգրման գործընթացին:<br>Աշակերտների պասիվությունը հանրօգուտ աշխատանքներում:<br>Կառավարման խորհրդի նախաձեռնությունների պակաս |

| | |
|---|---|
| Դպրոցում ակտիվ գործում են նաև աշակերտական և ծնողական խորհուրդները՝ ժամանակին բարձրացնելով բոլոր հարցերը և խնդիրները։<br>Նիստերին պատշաճ մասնակցություն։ | |

## Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Մելանթոն Արսլանյանի անվան Թալինի թիվ 1 հիմնական դպրոցը գտնվում է Արագածոտնի մարզի ք. Թալինի Մ. Հարությունյանի 16 հասցեում։ Համայնքի մոտ 50%-ը գործազուրկ են։ Հաստատության կապը և համագործակցությունը համայնքի հետ արդյունավետ և բավարար է եղել։ Համայնքի ժողովրդի հետ կապը (ծնողական խորհրդի) և Թալին խոշորացված համայնքի  աջակցությունը դպրոցին մեծ է։ Հաստատության տնօրենի կապը և համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ նույնպես բավարար է եղել։ Դպրոցն իրականացնում է կրթության կառավարման մարմնի հրամաններն ու հրահանգները։

Դպրոցն ակտիվորեն համագործակցում և կատարում է ԿԳՄՍ նախարարության, Արագածոտնի մարզպետարանի, դպրոցի կառավարման խորհրդի, Թալին խոշորացված համայնքի կրթության բաժնի և համայնքի մշակույթի տան գրադարանի, ԳԹԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, Կրթության տեսչական մարմնի, ՏՄԱԿ-ի և ԿՏԱԿ-ի հանձնարարականները, համագործակցում է նաև ՔԴԿ-ի, Ոստիկանության, ԱԻՆ-ի և այլ շահառու կազմակերպությունների հետ։ Մասնակցում նաև համայնքի բոլոր միջոցառումներին, համայնքի գրադարանում անցկացնում է տարբեր միջոցառումներ, համայնքային մարզադպրոցի հետ համատեղ անցկացնում մրցաշարեր։ Թե համայնքային, և թե հանրապետական շաբաթօրյակներին ցուցաբերում ակտիվ մասնակցություն՝ ունենալով իր

տարածքը(Կաթողիկե եկեղեցու շրջակայք, VII դար)։ Հաստատությունը յուրաքանչյուր տարի մասնակցում է համայնքում կատարվող ծառատունկին։ Հաստատության և երաժշտական դպրոցի միջև կազմակերպվում են փոխադարձ միջոցառումներ դպրոցի սովորողների մասնակցությամբ։ Այս ամենը ոգեշնչում է սովորողներին՝ ավելի շատ սիրելու իրենց համայնքը, հայրենիքը և պատմությունը։ Այս ամենը սովորողների մեջ խթանում է մարդասիրություն, ժողովրդավարություն։

Համագործակցում է նաև <<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիրի հետ։

Հանդիսանում է նաև ԿԶՆԱԿ-ի կենտրոն վերապատրաստող դպրոց։

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| 1. Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝համայնքի կրթության բաժնի հետ, մասնակցություն համայնքային ծրագրերին, միջոցառումներին, սպորտային և մշակութային կյանքին։<br>**2.** Համագործակցություն սոցիալապես անապահով երեխաներին տարբեր ծրագրերում ներառելուն։<br>**3**.Համագործակցություն կրթության կառավարման մարմինների՝<br>ԿԳՄՍՆ և Լիազորված մարմնի հետ։<br>**4.** Կառավարման խորհրդի հետ։<br>**5.**Շահառու կազմակերպությունների՝ ԳԹԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ՔԴԿ-ի, ԱԻՆ-ի, Ոստիկանության հետ։<br>**6.** Համագործակցում <<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիրի հետ | Համայնքի կողմից հաստատությանը՝ ներդրումների բացակայություն։<br>Լիազորված մարմնի կազմակերպած միջոցառումներում թույլ ընդգրկվածություն։<br>Ոստիկանության կողմից սեմինարների պակաս։ |

## Հաստատության ուսումնական միջավայրը

Ուսումնական միջավայրը կրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Այն նպաստում է կրթության որակի բարձրացմանը, սովորողների առողջության պահպանմանը և ֆիզիկական զարգացմանը: Դպրոցը ունի լուսավոր դասասենյակներ, թեքահարթակ, հարմարեցված սանհանգույցներ, գրադարան, ճաշարան, բուժկետ, մարզադահլիճ, մարզահրապարակ, հանդիսությունների դահլիճ: Դպրոցը ավելի հրապուրիչ դարձնելու համար  շատ կարևոր է ունենալ հարմարավետ, մոտիվացնող ուսումնական միջավայր՝ թեքահարթակներ նաև ներսում, ռեսուրս սենյակ, սանհանգույց 2-րդ հարկում, ընթերցասրահ, գերժամանակակից գույք(հագեցած լաբորատորիաներ), արհեստանոց և ստեղծել առարկայական և մշակութային խմբակներ: Ուսումնական միջավայրը կազմակերպված հնարավորությունների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը սովորողին տրամադրում է ուսուցման և անձնային մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ, սովորողին կրթում և դաստիարակչական ազդեցություն գործում նրա վրա: Այս զարգացման ծրագրում պլանավորված են քայլեր ամբողջացնելու նկարագրված ուսումնական միջավայրը: Երեխաները և ծնողները համոզված են, որ դպրոցում իրենք լավ պաշտպանված են, դպրոցում տիրում է առողջ  բարոյահոգեբանական մթնոլորտ: Դպրոցում չկան սովորողի նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր:  Դպրոցում բացառվում է որևէ բուլինգի դեպք: Դպրոցում վերահսկվում են բացակայությունները՝ պահպանվում հակահամաճարակային կանոնները, անհրաժեշտության դեպքում դասարանն անցնում է հեռավար ուսուցման:

Դպրոցում պետք է ստեղծել հասանելի պայմաններ բոլոր սովորողների համար՝ անկախ ազգությունից, սոցիալական վիճակից և մտավոր կարողությունից՝ այդ թվում ԿԱՊԿՈՒ երեխաները:

Դպրոցում ստեղծված է այնպիսի ուսումնական միջավայր, որը տեխնիկապես հագեցած չէ, սակայն հնարավորություն չի ընձեռում նոր մեթոդներ կիրառելու համար:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| Ներքին կարգապահական կանոնների կիրառում: Դպրոցում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտ: Դպրոցի գլխավոր(I) մասնաշենքում թեքահարթակի առկայություն: Սանհանգույց ԿԱՊԿՈՒ սովորողների համար նախատեսված: Մարզադահլիճ Հանդիսությունների դահլիճ Հարմարավետ, ասֆալտապատ բակ Լուսավոր դասասենյակներ, Համակարգչային սենյակներ Բուժկետ Ջեռուցում, շուրջօրյա ջրամատակարարում Ճաշարան Ճաշարանում օգտագործվող թարմ բանջարեղեն (դպրոցի ջերմոցից) Սկսած 2017թ-ից դպրոցն իրականացնում է ներառական կրթություն Արևային էներգիայի առկայություն | Լաբորատորիա(ֆիզիկա) թերի համալրված(ինքնաշեն) Առարկայական խմբակների բացակայություն Արհեստանոցի բացակայություն Միջդպրոցական միջոցառումների բացակայություն Թաքստոցի բացակայություն Քիմիա կենսաբանության լաբորատորիայի բացակայություն Գերժամանակակից ՏՀՏ-ների բացակայություն |

## Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն են ապահովվում հաստատությունում և վերապատրաստող կազմակերպություններում

պարբերաբար կազմակերպվող տարատեսակ վերապատրաստումները, դասընթացները, սեմինար-պարապմունքները, խորհրդատվություններն ու խորհրդակցությունները:

Թալինի թիվ 1 հիմնական դպրոցը հանդիսանում է ԿԶՆԱԿ-ի կենտրոն վերապատրաստող դպրոց, որտեղ այս տարի Հանրակրթության պետական չափորոշչի վերապատրաստում է անցել դպրոցի ուսուցիչների 90%-ը, և տարածաշրջանի 253 ուսուցիչներ, 25 տնօրեններ և տնօրենների տեղակալներ: Դպրոցում յուրաքանչյուր կիսամյակի ավարտին մանկավարժական օրինակելի աշխատանքի համար ուսուցիչները հաճախակի արժանանում են խրախուսանքի: Հաստատությունը համալրված է փորձառու և որակյալ կադրերով: Վերջին 5 տարիների ընթացքում մանկավարժական աշխատողների թափուր տեղերի համալրումն իրականացվել է սահմանված ընթացակարգերի համաձայն՝ ապահովվելով գործընթացների թափանցիկությունն ու արդարությունը: Համալրվել են մանկավարժական աշխատողների բոլոր թափուր տեղերը: Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացման համար մեծ դեր են խաղում փոխադարձ դասալսումները, բաց դասերը և միջոցառումները նաև ուսուցիչների նոր տեխնոլոգիաներին տիրապետելու դասընթացների կազմակերպումը:

Համակազմի շարունակական համալրում որոշակի փորձառություն ունեցող երիտասարդ կադրերով:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին դպրոցում դասաբաշխումներն իրականացվում են կրթության որակի բարելավման և արդյունավետության բարձրացման սկզբունքներից ելնելով, դրանց կազմման սկզբունքները թափանցիկ են և ընկալելի բոլոր մանկավարժների համար:

2023-2024 ուստարվա ընթացքում նախատեսվում է 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում դասընթացները ամբողջությամբ կազմակերպել նոր ՀՊՉ-ին համապատասխան, որի համար տնօրենության կողմից նախատեսվում է իրականացնել համակողմանի օգնություն և խիստ վերահսկողություն:

Նախատեսվում է իրականացնել նոր ուսումնական տարում նախագծային այնպիսի աշխատանքներ, որոնց միջոցով վեր կհանվեն համայնքային տարբեր հիմնախնդիրներ և կիրականացվեն համայնքային կարիքների ուսումնասիրություն և վերլուծություն:

Դպրոցում դասավանդում է 32 բարձրագույն կրթությամբ, համապատասխան մասնագիտական որակավորմամբ  փորձառու ուսուցիչներ, աշխատում են նաև 5 ուսուցչի օգնականներ:

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացմանն ուղղված իրականացվում են մի շարք միջոցառումներ՝  դասալսումներ տնօրենության և մ/մ նախագահների կողմից, որից հետո վերլուծություն և եթե կարիք կա կազմակերպել վերապատրաստում: Տնօրինությունը և  բոլոր ուսուցիչները մասնակցում են պարբերաբար դպրոցում իրականացվող ՏՀՏ-ների վերապատրաստմանը:

Յուրաքանչյուր կիսամյակում մեկ անգամ կազմակերպվում է որևէ առարկայի դրվածքը դպրոցում լսումներ, կազմակերպվում է նաև հմուտ ուսուցիչների առաջավոր փորձը դպրոցում խորհրդատվական սեմինարներ: Դպրոցի ամբողջ մանկավարժական համակազմը մասնակցում է ՏՄԱԿ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, նաև  Պետք է խթանել ուսուցիչներին մասնակցելու կամավոր ատեստավորմանը և տարակարգի ձեռքբերմանը:

- Բարձրագույն մասնագիտական կրթություն --  **32**
- Կամավոր ատեստավորում անցած --- **3** (72%,  73%,  95%)
- Տարակարգ ունեցող  --- **1**(I)
- Մենթոր ուսուցիչ  --- **3**

| Ուսուցիչներ | 2022-2023 ուստարի | % |
|---|---|---|
| Մինչև 30 տարեկան | 0 | |
| 31-40 տարեկան | 5 | 15,625 |
| 41-50 տարեկան | 7 | 21,875 |
| 51-60 տարեկան | 12 | 37,5 |
| 61 և ավելի | 8 | 25 |
| | 32 | |




| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Բարձրագույն կրթություն, անհրաժեշտ որակավորում ունեցող ուսուցիչներ:<br>Տարակարգ ունեցող ուսուցիչ(1):<br>Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ (3):<br>Մենթոր ուսուցիչներ(3):<br>Իրենց գործին նվիրված մանկավարժներ:<br>Փոխադարձ դասալսումներ, փորձի փոխանակում:<br>Բոլոր առարկաներից կազմակերպվող բաց դասեր:<br>ՏՀՏ վերապատրաստումներ վարչական և մանկավարժական բոլոր աշխատողների համար<br>ՀՊՉ վերապատրաստված ուսուցիչներ: | Կամավոր ատեստավորման դիմելու պասիվություն:<br>Երիտասարդ ուսուցիչներով քիչ համալրված:<br>Ուսուցիչների ժամանակակից տեխնոլոգիաների թույլ տիրապետելը: |

## Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության Հնարավորություններ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
